ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1181-Ա

07 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Այգեշատ գյուղի Արարատյան փողոցի թիվ 2 տան բնակիչ Անդրանիկ Գարուշի Հայրապետյանի դիմումը՝ պարզվել է, որ.

- համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 27 . 02 . 2026թ. հաստատված 1161 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 09 . 03 . 2026թ . կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Այգեշատ գյուղում գտնվող բնակելի տունը և օժանդակ շինությունները պատկանում են Անդրանիկ Գարուշի Հայրապետյանին.

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.12հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.01274հա սահմանազատված հողամաս,

- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված

պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Այգեշատ գյուղում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.01274հա մակերեսով հողամասը համարել Անդրանիկ Գարուշի Հայրապետյանի /ծնված 08.11.1980թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
07 օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1182-Ա

07 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ ԹԻՎ 8/1 ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Բաղրամյան փողոցի թիվ 16 շենքի թիվ 54 բնակարանի բնակիչ Հրայր Արշակի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մարշալ Բաղրամյան փողոցի 1-ին փակուղու թիվ 8/1 և Հովհաննես Թումանյան փողոցի թիվ 5 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2438727 տրված՝ 02.06.2009թ., թիվ 25062026-04-0092 տրված՝ 25.06.2026թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040113SKMZE8/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Հովհաննես Թումանյան փողոց, թիվ 5 խանութ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
07 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1183-Ա

07 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 34/2 ԵՎ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ ԹԻՎ 6/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի 2-րդ փակուղու թիվ 6/1 տան բնակիչ Մհեր Գևորգի Ավետիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 34/2 և Վազգեն Առաջինի փողոցի 2-րդ փակուղու թիվ 6/2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 04122025-04-0094 տրված՝ 04.12.2025թ., թիվ 28072026-04-0046 տրված՝ 28.07.2026թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011SHRSPW4/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց, թիվ 34/2 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
07 օգոստոսի 2026 թվականին

ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1184-Ա

07 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՌԸ ԵՎ 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 40 տան բնակիչ Եղսիկ Հայրապետի Հովհաննիսյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 27.10.2005թ. տրված թիվ 722938 սեփականության իրավունքի վկայական, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր 0401193CE8XH, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 04.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026JJT2RQ / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 40 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 66.5քմ /արտաքին 66.5քմ, ներքին 63.5քմ/ մակերեսով բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր

սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 1-ին թաղամասի թիվ 40 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 66.5քմ /արտաքին 66.5քմ, ներքին 63.5քմ/ մակերեսով բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 114 601 / հարյուր տասնչորս հազար վեց հարյուր մեկ/ ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
07 օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1185-Ա

07 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1, ԹԻՎ 44/1 ԵՎ ԹԻՎ 44/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Դաշտ բնակավայրի Մ. Մաշտոց փողոցի թիվ 33 տան բնակիչ Արմինե Աշոտի Մեսրոպյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Այգեշատ բնակավայրի Ազատության փողոցի թիվ 37/1, թիվ 44/1 և թիվ 44/2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ թիվ 23052025-04-0099 տրված՝ 23.05.2025թ, թիվ 10072023-04-0058 տրված՝ 10.07.2023թ, թիվ 10072023-04-0091 տրված՝ 10.07.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04042GVTKG8C/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, Այգեշատ բնակավայր, Ազատության փողոց, թիվ 28/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
07 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1186-Ա

07 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 07.08.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

X Ստորագրող՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ 3208860013

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1187Ա

10 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՋՈՒԼԻԵՏԱ ԱՐՏԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022 թվականի թիվ 24 որոշումը, հաշվի առնելով Երևանի պետական համալսարանի կողմից տրված N1116 տեղեկանքը և սոցիալական ծրագրերի և առողջապահության հարցերի բաժնի պետ Սամվել Վարդանյանի զեկուցագիրը՝ Վաղարշապատ համայնքի Շահումյան բնակավայրի Հովհաննեսի փողոց 33 տան բնակիչ Ջուլիետա Արտակի Սարգսյանի ուսման վարձի համար ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդրանքի մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից, Երևանի պետական համալսարանի 2470100009060000 հաշվեհամարին փոխանցել 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Ջուլիետա Արտակի Սարգսյանի ուսման վարձի համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1188Ա

10 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022 թվականի թիվ 24 որոշումը, հաշվի առնելով սոցիալական ծրագրերի և առողջապահության հարցերի բաժնի պետ Սամվել Վարդանյանի զեկուցագրերը՝ Վաղարշապատ համայնքի բնակիչների դիմումները դեղորայքի գնման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդրանքի մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից, 197900/ մեկ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր/ դրամ փոխանցել՝ ԱՁ Արա Վարդանյանի Ակբա բանկ ԲԲԸ-ի 220219874496000 հաշվեհամարին նրա հետ կնքած պայմանագրով պարտավորությունների կատարման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1189Ա

10 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հաշվի առնելով կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի զեկուցագիրը, երիտասարդների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվող համաքաղաքային միջոցառումների համար տպագրական ծառայություն ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 169000/մեկ հարյուր վաթսունինը հազար/ դրամ փոխանցել ԱՁ Արման Սուքիասյանի Ինեկոբանկ ՓԲԸ-ի 2052232080621001 հաշվեհամարին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1190-Ա

11 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 11.08.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4 և թիվ 5 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**